

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ՄԱՐԱՆԱԹԱ**  
**SPECIAL TOPIC: MATANATHA**

Սա արամերեն արտահայտություն է, որն արտացոլում է վաղ պաղեստինյան եկեղեցու աստվածաբանական դավանաբանական հիմնավորում՝ (1) Հիսուսի աստվածության մասին (Սաղմոս 110) կամ (2) Հիսուսի Երկրորդ Գալստյան մասին (Գործք 3:19-21): Այս բառի նշանակությունը կախված է նրանից, թե ինչպես են այն բաղդատում՝

1. «Մեր Տերը, արի՛» (այսինքն՝ *marana-tha*), ունի Հայտն.22:20-ում միևնույն հրամայական արտահայտության նշանակությունը: Հետևաբար թարգմանություններից մեծ մասը 1 Կորնթ. 16:22-ում ենթադրում է այդ իմաստը: Եթե այդպես է, ապա դա աղոթք է Հիսուսի վերադարձի համար:
2. «Մեր Տերը եկել է» (այսինքն՝ *maran-atha*) կլինի արամերեն լեզվի ԿԱՏԱՐՅԱԼ ժամանակը: Սա այն թարգմանությունն է, որը նախընտրում էր Ոսկեբերանը (մ.թ. 345-407թթ), որը խոսում է Հիսուսի Մարմնավորման մասին:
3. «Մեր Տերը գալիս է» խոսքը արտացոլում է եբրայերեն ՄԱՐԳԱՐԵԿԱՆ ԿԱՏԱՐՅԱԼ, որը շատերի կողմից կիրառվում է Քրիստոնեական ծառայության շարժառիթ ունենալու համար: Երկրորդ Գալուստը միշտ եղել է բոլոր դարերի հավատացյալների համար որպես քաջալերություն:
4. Դիդարք 10:6 (գրված առաջին դարի վերջում կամ երկրորդ դարում) կիրառում է այս նույն արտահայտությունը Տերունական Ընթրիքի համատեքստում, որտեղ թե՛ Հիսուսի այդ պահին այնտեղ ներկա գտնվելը և թե՛ ապագայի էսկատոլոգիական (վախճանաբանական) գալուստը աղոթքներում շեշտադրվում են: